ՍՍՀՄ Գերագոյն Սովետի Նախագահութեան Հրամանագիրը

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՅԱՏՈՒԿ ՁԵՒ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում եւ նրա առնչութեամբ ազգամիջեան յարաբերութիւնների շարունակուող լարուածութեան կապակցութեամբ, նպատակ ունենալով կանխել նրանց յետագայ սրումը եւ կայունացնել իրադրութիւնն այդ ռեգիոնում, հաշուի առնելով Ադրբեջանական ՍՍՀի եւ Հայկական ՍՍՀի կուսակցական ու պետական մարմինների, ինչպէս նաեւ Ազգութիւնների սովետի յանձնաժողովի առաջարկութիւնները, ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահութիւնը, այդ հարցը քննութեան առնելով Ադրբեջանական ՍՍՀ Գերագոյն սովետի նախագահութեան հետ, ՍՍՀՄ սահմանադրութեան 119րդ յօդուածի 14րդ կէտին համապատասխան որոշում է.

1. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ժամանակաւորապէս սահմանել կառավարման յատուկ ձեւ, պահպանելով Լեռնային Ղարաբաղի՝ որպէս Ադրբեջանական ՍՍՀի կազմում ինքնավար մարզի, ստատուսը:

Կազմել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի Յատուկ կառավարման կոմիտէ՝ ընկ. Ա.Ի. Վոլսկու նախագահութեամբ:

Դադարեցնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի քսաներորդ գումարման ժողովրդական դեպուտատների սովետի լիազօրութիւնները մինչեւ սովետի նոր կազմի ընտրութիւնների անցկացումը:

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի յատուկ կառավարման կոմիտէն ենթարկւում է անմիջականօրէն ՍՍՀ Միութեան պետական իշխանութեան եւ կառավարման բարձրագոյն մարմիններին, լրիւ ծաւալով օժտուած է ինքնավար մարզի ժողովրդական դեպուտատների սովետի եւ նրա գործադիր կոմիտէի լիազօրութիւններով, իսկ Կոմիտէի նախագահը՝ ժողովրդական դեպուտատների մարզային սովետի գործադիր կոմիտէի նախագահի իրաւունքներով ու պարտականութիւններով:

Յիշեալ Կոմիտէի վրայ դնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պետական իշխանութեան եւ կառավարման տեղական մարմինների ղեկավարումը, ինչպէս նաեւ նրան յանձնել ժողովրդական դեպուտատների մարզային սովետի գործադիր կոմիտէի ապարատը՝ որպէս աշխատանքային մարմին:

3. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում գտնուող միութենական եւ հանրապետական ենթակայութեան ձեռնարկութիւնները, հիմնարկութիւններն ու կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ նրանց մասնաճիւղերը, արտադրամասերն ու միւս կառուցուածքային ստորաբաժանումները սոյն հրամանագրի գործողութեան ժամանակամիջոցում, այն հարցերում, որոնք [illegible] ՍՍՀ Միութեան Գերագոյն սովետի նախագահութեան հետ համաձայնեցնելով՝ հարցերի [illegible] կան ՍՍՀ Միութեան նախարարների խորհրդի կարծիքը, ենթարկւում են Կոմիտէին:

Մամուլի, ռադիոյի եւ հեռուստատեսութեան, մասսայական ինֆորմացիայի միւս միջոցների օրգանները, հրատարակչութիւնները, պոլիգրաֆիական ձեռնարկութիւնները, ներքին գործերի մարմինները, ինչպէս նաեւ մշակոյթի, ժողովրդական կրթութեան, առողջապահութեան հիմնարկութիւններն ու ոչ արտադրական ոլորտի միւս կազմակերպութիւնները, անկախ իրենց ենթակայութիւնից ու գերատեսչական պատկանելութիւնից, իրենց գործունէութիւնը իրականացնում են Կոմիտէի կամ նրա լիազօրած անձանց անմիջական ղեկավարութեամբ:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում դատախազութեան ու դատարանների գործունէութիւնն իրականացնում է գործող օրէնսդրութեան ու այն կարգի համաձայն, որ կը սահմանեն համապատասխանաբար ՍՍՀՄ գլխաւոր դատախազը, ՍՍՀՄ արդարադատութեան մինիստրութիւնը եւ ՍՍՀՄ գերագոյն դատարանը:

4. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Յատուկ կառավարման կոմիտէին իրաւունք տալ.

դադարեցնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպիտատների շրջանային, քաղաքային, գիւղական, աւանային սովետների, նրանց գործադիր եւ կարգադիր մարմինների լիազօրութիւնները, ինչպէս նաեւ նշանակել յիշեալ տեղական սովետների ընտրութիւններ եւ կազմակերպել դրանց անցկացումը.

դադարեցնել հասարակական կազմակերպութիւնների եւ ինքնագործ միաւորումների՝ ՍՍՀՄ սահմանադրութեանն ու օրէնսդրութեանը հակասող գործունէութիւնը կամ, անհրաժեշտութեան դէպքում, արձակել դրանք: Հանրապետական կամ ընդհանուր միութենական մարմիններ ունեցող նշուած կազմակերպութիւնների ու միաւորումների գրանցումը կամ արձակումը կատարւում է այդ մարմինների հետ համաձայնեցնելով.

անհրաժեշտութեան դէպքում պետական, տնտեսական եւ սոցիալ-կուլտուրական շինարարութեան հարցերի առթիւ առաջարկութիւններ ներկայացնել անմիջականօրէն ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահութիւն, ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդ, ՍՍՀՄ մինիստրութիւններ, պետական կոմիտէներ ու գերատեսչութիւններ:

5. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում ժամանակաւորապէս դադարեցնել «Պետական ձեռնարկութեան (միաւորման) մասին» ՍՍՀՄ օրէնքի 6րդ յօդուածի 2րդ, 3րդ կէտերի ու 5րդ կէտի երրորդ պարբ. եւ 7րդ յօդուածի գործողութիւնը:

6. Ադրբեջանական ՍՍՀ Գերագոյն սովետի նախագահութեանը՝ ընդունել սոյն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ:

7. Սոյն հրամանագիրը կիրարկել 1989 թուականի Յունուարի 20ից:

ՍՍՀՄ Գերագոյն Սովետի Նախագահութեան Նախագահ՝
Մ. ԿՈՐՊԱՉՈՎ

ՍՍՀՄ Գերագոյն Սովետի Նախագահութեան Քարտուղար՝
Թ. ՄԵՆԹԵՇԱՇՎԻԼԻ

Մոսկուա, Քրեմլին, 12 Յունուար 1989